# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2011 թվականի N 1063 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 1067-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 975-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետին համապատասխան՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի նոյեմբերի 24-ի N 920-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1067-Ա որոշմամբ հաստատված խորհրդի կազմի՝

1) «Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ» բաժնում՝

ա. «Ա. Քոչարյան - ՀՀ Լոռու մարզպետ» բառերը փոխարինել «Հ. Պողոսյան - ՀՀ մշակույթի նախարար» բառերով,

բ. «Վ. Գաբրիելյան - ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Վ. Գաբրիելյան - ՀՀ ֆինանսների նախարար» բառերով.

2) «Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամներ» բաժնում «Ա. Կարապետյան - ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ» բառերը փոխարինել «Ա. Կարապետյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության պետ» բառերով.

3) «Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում՝

ա. «Վ. Մովսիսյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Ն. Մարգարյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մաթեմատի-

կայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող» բառերով,

բ. «Թ. Թովմասյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Տ. Խաչատրյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող» բառերով,

գ. «Ա. Բաղդասարյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող» բառերը փոխարինել «Ի. Դավթյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. նոյեմբերի 10
Երևան

